

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄԱՅՔԸՆ ՍՕՍԻԿԵԱՆԻ ՀԵՏ

Ծանօթ ըլլալով Ձեր գործունեության եւ գրութիւններուն, 10 Օգոստոս 2005 թուականէն յստակ է ձեր նպատակը. «գործադրութեան դնել Նախագահ Ուտրօ Ուիլսընի սահմանագիծը Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ.» ուստի առաջին հարցում.

Ապագայի առումով, իրագործելու համար Ձեր նպատակը ի՞նչ քայլերու կը դիմէք, կամ ինչ գործունեութիւն կը տանիք:

Մեր գործունեութիւնը եղած է դաստիարակչական եւ քարոզչական ուղիներով. մէկը սփիւռքահայութեան եւ միւսը Արեւմտեան Հայաստանի մէջ, կրօնափոխ եղած Հայ ժողովուրդի ժառանգորդներուն մօտ:

Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանագիծը հաստատող իրաւարար վճռագիրը կնքուած է ԱՄՆ-ի մեծ կնիքով: Ուստի, այս պարագան Միացեալ Նահանգները կը դնէ պարտաւորութեան տակ եւ այդ պատճառաւ ալ Ամերիկան ոչ միայն յատուկ դեր ունի կատարելիք, այլ եւ իր վրայ դրուած պարտաւորութեան գործադրութիւնը, որ այսօր շատ աւելի նպաստաւոր է Մ. Նահանգներու շահերուն, երբ նկատի կառնենք միջին արեւելքի մէջ եղած իրարանցումները: Անկախ Հայաստան մը Միջին Արեւելքին մէջ, վստահաբար կրնայ շատ աւելի կայուն վիճակ ստեղծել այդ տարածաշրջանին մէջ ի նպաստ Միացեալ Նահանգներու: Հոս կը փափաքիմ մէջբերում ընել 1920 թթ Ամերիկայի Արտաքին Գործոց Նախարար՝ Պէյնպրիճ Քոլպի-ի խօսքը «Առանց Արեւմտեան Հայաստանի Անկախութեան, դուր կը բացուի շատ աւելի Փանթուրքիզմի եւ Փանիսլամիզմի»:

Այս նպատակին հասնելու համար, ինչ գործունեութիւններ կատարած էք մինչեւ այժմ, եւ ի՞նչ են ձեր կատարելիքները ապագային:

Սփիւռքահայութիւնը աւելի քան կէս դար է ընտրած է Յեղասպանութեան ճանաչման պայքարի ուղին, որ իր արդար ճանաչումը ստանալէ ետք պիտի սկսի վնասուց հատուցման, եւ հողային պահանջատիրութեան: Մենք ուրք տարիներ հողային պահանջատիրութեան հարցը կը քարոզենք սփիւռքի եւ Հայաստանի մէջ: Մեր գործունեութեան քարոզչութիւնը սփիւռքի մէջ եղած է շատ համեստ, սակայն ազդեցիկ. մենք տարբեր երկիրներու մէջ հրապարակային ձեռնարկներով հայութիւնը կը ներգրաւենք մեր տարած գործունեութեան: Այդ հրապարակային ձեռնարկներուն կը հրաւիրենք հայ թէ օտար, քաղաքագետներ, պատմաբաններ, իրաւաբաններ, հոգեւորականներ, եւ Քալիֆօրնիոյ Ասամպլի անդամներ, Մ.Ն. քոնկրետականներ, որոնք բեմէն դիմած են Միացեալ Նահանգներու կառավարութեան՝ ճանչնալու Ուիլսընեան Հայաստանը որպէս Հայկական հողեր, եւ գործադրեն Նախագահ Ուիլսընի իրաւարար վճռագիրը: Հոս պէտք է յիշեմ, թէ մեր հրապարակային ձեռնարկներէն մաս մը հեռարձակուած Հայաստանի Հանրապետութեան հեռատեսիլի 21 կայանէն:

Ինչպէ՞ս մեզի հող պիտի տան երբ այդ հողի վրայ Հայութիւն չկայ:

Մեր պահանջած հողատարածքները Ուիլսընեան Հայաստանն է, եւ ոչ թէ երեւակայական հողատարածքներ. Ուիլսընեան Հայաստանը՝ «Պիթլիս, Վան, Էրզրում եւ Տրապիզոն» մեզի յատկացուած է Նախագահ Ուտրօ Ուիլսընի իրաւարար վճռագրով Նոյեմբեր 22, 1920 թուականին. այդ իրաւարար վճռագիրը միջազգային օրէնքով վերջնական է, եւ անքննելի. Ուստի, այդ չորս նահանգներու հողատարածքին վրայ կապրին 1,5 Միլիոն Հայկական արմատ ունեցողներ. Նկատի պէտք է առնենք, որ սոյն հողատարածքին վրայ ընդհանուր բնակչութեան թիւը, 3,2 միլիոն է միայն. Ուրեմն հայութիւն կայ հոն՝ ուր որ մերն է:

Ուիլսընեան Հայաստանի մէջ, ինչպէս նաեւ ամբողջ Արեւմտեան Հայաստանի մէջ քիւրտեր կը բնակին: Ուրեմն, ինչպէ՞ս Հայաստան պիտի հիմնուի հոն, ուր որ ամենը քիւրտ են:

Ա.Հ.Պ. Խորհուրդը պէտք է հետապնդէ միայն մէկ նպատակ, պայքարիլ Ուիլսընեան Հայաստանի անկախացմամբ. եւ յիշեցի թէ, 1,5 միլիոն հայկական արմատներ ունեցողներ կը բնակին հոն, եւ թէ այդ հողատարածքը հայութեան յատկացուած է միջազգային օրէնքով, որ անբեկանելի է. Իսկ եթէ ձեր հարցումը այն էր, թէ նոյնիսկ միջազգային օրէնքով հայութեան յատկացուած հողատարածքը քիւրտերը ինչու պիտի զիջին, լաւ կ'ըլլայ որ այցելէք www.ekurd.net, ցանցը, հոն պիտի տեսնէք, թէ Արեւմտեան Հայաստանի քարտէսին վրայ գրուած է Քիւրտիստան, սակայն այդ 40,000 քառ.մղոն հողատարածքը, որ Հայութեան յատկացուեցաւ, ատոր վրայ գրուած է Western Armenia, այդ կը